ՔՂՔԶՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՔԴԽ-111-Ն-31

2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՂՔԶՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի ԹԻՎ ՔԴԽ-23-Ն-1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, 26-րդ հոդվածի 3-րդ մասով, 94-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 9-ի թիվ ՔԴԽ-23-Ո-47 որոշմամբ և թիվ ՔԴԽ-23-Ո-48 որոշումներով և հիմք ընդունելով Հանրապետության նախագահի 2021 թվականի նոյեմբերի 25-ի թիվ ՆՀ-372-Ա և նոյեմբերի 29-ի թիվ ՆՀ-376-Ա հրամանագրերը՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 9-ի ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով չսահմանված Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանների ճանապարհները, ճանապարհների սպասարկման տարածքները սահմանելու, դատավորների՝ ըստ ճանապարհների և մասնագիտացման բաշխումն ու թվակազմը հաստատելու մասին» թիվ ՔԴԽ-23-Ն-1 որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման 1-ին հավելվածի 1-ին աղյուսակի 1-20-րդ կետերի «Սպասարկման տարածք» սյունակների «համայնքների» բառերից հետո համապատասխանաբար լրացնել «, Կոտայքի մարզի Աբովյան, Ակունք (Ակունք համայնքի Ջառ, Ջովաշեն, Կապուտան, Կոտայք, Հատիս, Նոր գյուղ, Սևաբերդ գյուղեր), Առինջ, Արամուս, Արզնի, Բալահովիտ, Բյուրեղավան (Բյուրեղավան համայնքի Նուռնուս, Ձրաբեր գյուղեր), Գառնի, Գեղադիր, Գեղաշեն, Գետամեջ, Գեղարդ, Գետարգել, Գողթ, Եղվարդ (Եղվարդ համայնքի Արագյուղ, Բուժական, Ջովունի, Ջորավան, Սարալանջ գյուղեր), Կաթնաղբյուր, Կամարիս, Հացավան, Մայակովսկի, Մրգաշեն, Նոր Արտամետ, Նոր Գեղի, Նոր Երզնկա, Նոր Հաճն, Ողջաբերդ, Պռոշյան, Պտղնի, Ձրվեժ,

(Ձրվեժ համայնքի Ջովք, Ջորաղբյուր գյուղեր), Վերին Պտղնի, Քանաքեռավան և Քասախ համայնքների» բառերը,

2) Որոշման 1-ին հավելվածի 1-ին աղյուսակի 21-րդ կետի «Սպասարկման տարածք» սյունակի «Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի վարչական տարածքներ» բառերը փոխարինել «Գեղարքունիքի մարզի և Կոտայքի մարզի Հրազդան, Ծաղկաձոր, Ջարեճցավան (Ջարեճցավան համայնքի Ալափարս, Արզական, Բջնի, Կարեճիս, Ֆանտան գյուղեր), Արգել, Թեղենիք, Լեռնանիստ, Մեղրաձոր (Մեղրաձոր համայնքի Աղավնաձոր, Արտավազ, Հանքավան, Մարմարիկ գյուղեր), Ձրառատ, Սոլակ, Քաղսի և Քարաշամբ համայնքների վարչական տարածքներ» բառերով,

3) Որոշման 1-ին հավելվածի 2-րդ աղյուսակի «(քաղաքացիական մասնագիտացում)» բաժնի 24-րդ կետի «Նստավայրի անվանում» սյունակի «Քանաքեռ» բառը փոխարինել «Աջափնյակ-2» բառով,

4) Որոշման 1-ին հավելվածի 8-րդ աղյուսակի «(քաղաքացիական մասնագիտացում)» բաժնի 1-ին կետի «Սպասարկման տարածք» սյունակը «տարածքներ» բառից հետո լրացնել «, կորպորատիվ վեճերի վերաբերյալ գործերով՝ Շիրակի մարզի վարչական տարածք» բառերով, իսկ «Մասնագիտացում» սյունակը «Քաղաքացիական» բառից հետո լրացնել «/Կորպորատիվ վեճերի վերաբերյալ գործեր/» բառերով,

5) Որոշման 1-ին հավելվածի 8-րդ աղյուսակի «(քաղաքացիական մասնագիտացում)» բաժնի 5-րդ կետի «Դատավոր» սյունակը լրացնել «Արզումանյան Կիմա Վաչագանի» բառերով, «Սպասարկման տարածք» սյունակից հանել «, կորպորատիվ վեճերի վերաբերյալ գործերով՝ Շիրակի մարզի վարչական տարածք» բառերը, իսկ «Մասնագիտացում» սյունակից հանել «/Կորպորատիվ վեճերի վերաբերյալ գործեր/» բառերը,

6) Որոշման 4-րդ հավելվածի աղյուսակի 21-րդ կետի «Դատավոր» սյունակը լրացնել «Քիշարյան Կարեն» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՔՐԶՐՎԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ. ՅԱՂՆԳԻՐՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 30
ք. Երևան